

## ԱՆՑԵԼԼՔ

ԽՈՐԵՆ Ա. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

1938թ. Ապր. 16-ին, կջմիածնում, խորհրդաւոր մահով մեռել է Ամենայն Հայոց Կաթուղիկոս Խորէն Ա.-ը: Ասում ենք՝ խորհրդաւոր, որովհետեւ տեղակալ Գէորգ Արք. Զէօրեցչեանի հեռագիրը հաղորդում է, թէ մահը եղել է հետեւանք «սրտի կաթւած»-ի, մինչդեռ ուրիշ հաւասարի աղբիւրներ վկայում են, թէ Կաթուղիկոսը խեղաժամահ է արւած Երևանից ուղարկւած չէկիսաների ձեռքով: Եւ այս վերջին լուրը թւում է աւելի հաւանական, որովհետեւ եթէ Կաթուղիկոսի մահը լինէր բնական, խորհրդային իշխանութիւնը պէտք չէր ունեայ մահւան յաջորդող պարագաները ծածկելու հասարակութիւնից:

Այսպէս թէ այսպէս, յանձին Խորէն Ա. Կաթուղիկոսի, հայկական հորիզոնից անհետանում է մի պատկանովի գէմք՝ ոչ միայն մի հոգեւոր – եկեղեցական պետ, այլև ականաւոր հասարակական գործիչ:

Խորէն Ա. Կաթուղիկոսը ծնած էր Թիֆլիսում 6 Դեկտ. 1873թւին: Աշխարհական անունը Ալեքսանդր Մուրատքէցեան էր: Աւարտել էր Ներսիսեան դպրոցը եւ, երեք տարի սովորել Ժընեվի համալսարանում, որից յետոյ նւիրւել էր ուսուցչութեան Թիֆլիսում: Դերասան Զարիֆեանը այդ տարիների Ա. Մուրատքէցեանի մասին պատմում է, թէ՝ «լոթի տղայ էր, ուսուղ ։ խմող, քէփ անող եւ աղջիկների յետեւից վաղող»: \*) Պէտք է ասել, որ զրեթէ մինչեւ վերջ էլ նա մնաց այդպէս՝ զւարթ ու չչնչող մարդ:

1910թ.-ին ձեռնագրւում է վարդապետ, իրեւ Սեւանի վանքի միաբան: Ո՞չ թէ կրօնական ջերմեռանդութիւնը, այլ մի անյաջող

\*) «ՎԵՐ», 1937, թիւ 3.

սէր մզել էր երիտասարդ Ալեքսանդրին դէպի վանական կեանքը . նրա սիրած աղջկիը չէր յօժարել գտունալ կինը և նախընտրել էր ուրիշին , և նա յուսահատ՝ դարձաւ կուսակրօն :

Սակայն , վանքը նորընծայ վարդապետին երկար չհրապուրեց . նա , այս անդամ վեղարակիք , նորից նետեց հանրային գործունէութեան ասպարէզ՝ արադ բարձրացումներով հասնելով մինչեւ ազգային - եկեղեցական նւիրապետութեան բարձրադոյն աստիճանները :

1902-ին Խորէն վարդապետը կոչում է առաջնորդական փոխանորդի պաշտօնի Նոր - Բայազետ դաւառում :

1903-ին , ազգային կալւածքների դրաման ընդդիմանալով՝ աքսորդում է Ռուսաստան և Գոլիցինի անկումից յետոյ միայն վերապանում է իր պաշտօնի գլուխը :

1910-ին ընտրւում է Երևանի թեմի առաջնորդ և նոյն տարին ձեռնադրւում Եպիսկոպոս :

Այսուհետեւ , իրրեւ թեմակալ առաջնորդ , իրրեւ Եղբայրական Օգնութեան Կոմիտէի նախագահ , իրրեւ կաթուղիկոսական ներկայացուցիչ , աչքի զարնող մասնակցութիւն է ունենում կրթական , գաղթականների ինամատարութեան և աղքային ուրիշ կարեւոր գործերում : 1920 թ . Սուրէնեան Կաթուղիկոսի կողմից ուղարկւում է Եւրոպա ու Ամերիկա աշխատելու ի նպաստ հայկական դատի : Հանրապետութեան շրջանին ջերմ գործակից էր Հայաստանի աղքային կառավարութեան :

1923-ին տեղափոխւեց Էջմիածին՝ նշանակելով կաթուղիկոսական տեղակալ և Գերագոյն Խորհրդի նախագահ :

1932 թ . Նոյեմբ . 12-ին ընտրւեց Ամենայն Հայոց Կաթուղիկոս :

Ուրեմն , հազիւ հինգ ու կէս տարի տեւեց իր կաթուղիկոսութիւնը — սեւ ու գժրախտ տարիներ , որոնք իշխանութիւններ աւելի նահատակութիւն ու տառապանք եղան Խորէն Ա . Կաթուղիկոսի համար :

Բնաւորութեամբ քաղցր , յարաբերութիւններով նուրբ ու կենցաղագէտ , լայնախոն ու հեռատես , դիւնագէտի շնորհքով օժտուած՝ Խորէն Ա . ո'չ մի ջանք չխնայեց և անհնարին , երբեմն նոյն իսկ բարոյական արատ հասցնող զոհողութիւններ յանձն առաւ խորհրդային իշխանութեան հետ լեզու գտնելու համար , բայց եկեղեցին ու հոգեւորականութիւնը և խորհրդային իշխանութիւնը այնքա՞ն իրե-

բամերժ բաներ են, որ, ի հարկէ, կարելի չպիտի լինէր հաշտեցնել անհաշտելին։ Եւ Խորէնը զոհ գնաց իր հետապնդած նպատակին… իջմիածինը նրա օրով հասաւ նիւթական ու բարոյական քայլքայման ծայրայեղ աստիճանին։

Արտասահմանում, թէ ողջութեան ժամանակ եւ թէ մահւանից յետոյ, Խորէն Ա. Կաթուղիկոսի շուրջ կրքոտ բանալիքներ տեղի ունեցան եւ դեռ ունենում են։ «Հաճատակ», «Հէկիստ», «ամենայն Հայոց կալանաւոր», «Խանջևանի գործակալ», «Դաշնակցութեան համակիր», «Հակադաշնակցական», «ասուրբ», «անսուրբ»… Զո՞ւր եւ անիմաստ աղմուկի Խորէն Կաթուղիկոսը գրանցից եւ ոչ մէկը չէր։ Նա հայ մարդ էր, որ սիրում էր իր հայրենիքն ու ժողովուրդը եւ պատրաստ էր ամէն զոհողութեան նրանց բարիքն ապահովելու համար։ Ցարական իշխանութեան օրով նա աշխատում էր ա'յն ժամանակւայ կառավարութեան միջոցավ օգտագար լինել իր ժողովուրդին։ Հանրապետական տարիներին բարեկամ էր աղքային կառավարութեան։ Երբ եկան բոլչեւիկները՝ փորձեց նրանց գործակցել յօդում միեւնոյն նպատակի։ Ե՞րբ եւ որքա՞ն յաջողեց — այդ ուրիշ խնդիր, բայց վատութեան մէջ նրան կարելի չէ մեղադրել։ Խորէն Ա. Կաթուղիկոսը մաքուր հայրենասէր հայ էր, որ մեռաւ չաբաշար մահով իր հայրենասիրութեան համար։ Այդքանը բաւական է, որ աղէսպի յարդանքով գլուխ իշեցնենք նրա դժբախտ, թերեւս եւ անյայտ, դերեղմանի առջեւ…

### ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ

Անցեալ Նոյեմբեր 14-ին, մեռաւ բանաստեղծ Յակոբ Յակոբեանը։ Ծնած էր 1866 թ. Գանձակում։ Նախնական կրթութիւնը ստացել էր ծիսական դպրոցում և ողետական դիմնագիոնում, որը սակայն, չէր աւարտել։ 1893-ին անցնում է Բագու, ուր զանազան աշխատանքներ է կատարում։ 1901-ին տեղափոխում է Թիֆլիս Սոեւտրական Դրամատան գլխաւոր հաշւադահի պաշտօնով։ Մինչեւ մահ էլ մը նաց Թիֆլիսում։

Գրական գործունէութիւնը Յակոբեանը սկսեց իննսնական թւականներին՝ առաջին անգամ երեւալով «Մուրճ» ամսագրում 1893-ին։ Հստմեստ տաղանդի տէր ոտանաւոր զրող էր՝ ասզորւած ժամանակի աղքայնական - քաղքենի գաղափարներով։ Իր այդ շրջանի ստեղծագործութեան բնորոշման համար առաջ բերենք Ռաֆֆիի մահւան առթիւ դրած նրա մէկ ոտանաւորը («Մուրճ», 1894 թ., Ապրիլ)։